

**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԿՈՄՖՈՐՏԱՅՆՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՂԱՆԱԿԻ ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՆԴԵՔՍԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ
Դավթյան Պ. Գ., Դավթյան Տ. Պ., Վարդանյան Ա. Հ.**

Աշխատանքում եղանակային պայմանները բնորոշող բազմամյա տվյալների հիման վրա հաշվարկվել, վերլուծվել և գնահատվել է եղանակի փոփոխականության ինդեքսը: Վերջինս հնարավորություն է տալիս որոշելու տարածքի կոմֆորտայնությունը՝ օդերևութաբանական պայմաններից կախվածություն ունեցող հիվանդների համար նպաստավոր տարածքների ընտրության և ռեկրացիոն գոտիների առանձնացման համար:

Բանալի բառեր. եղանակի փոփոխականության ինդեքս, հարմարավետություն, օդերևութաբանական հիվանդություն, հանգիստ:

Նախաբան: Մարդ-բնություն փոխհարաբերության համակարգում մարդը համարվում է ոչ միայն օբյեկտ, որը ազդում է բնության վրա՝ վերափոխելով այն, այլ նաև սյուբեկտ, որն իր վրա է կրում վերափոխված բնության նեգատիվ երևույթները: Հաճախ մարդու վրա բնության հակադարձ ազդեցությունը ունենում է բավականին լուրջ հետևանքներ՝ առաջին հերթին խաթարելով մարդու առողջությունը:

Վերջին տասնամյակներում ձևավորվել է աշխարհագրական գիտությունների նոր դիսցիպլին՝ բժշկական աշխարհագրություն, որը համարվում է բնական միջավայրի էկոլոգիական պոտենցիալի համակարգային բնութագրման հիմնական բաղկացուցիչը [3]: Ներկա ժամանակաշրջանում մարդը համարվում է այն գորեղ ուժը, որը արմատապես փոխել է շրջակա միջավայրը և դրանով իսկ մեծ վնաս հասցրել իր առողջությանը, անգամ գոյատևմանը: Հայտնի է, որ մարդը համարվում է հիմնական արտադրող ուժը և առանց առողջության դադարում է որպես այսպիսին գոյություն ունենալուց: Իսկ առանց

առողջ հասարակության դադարում է նաև հասարակության կայուն զարգացումը: Հետևաբար հեշտ է նկատել, որ քննարկվող թեման, որը վերաբերում է տարածքի կոմֆորտայնության որոշմանը, շատ կարևոր է և խիստ արդիական: Կոմֆորտայնությունը բազմաթիվ գործոնների ազդեցությամբ է ձևավորվում. սրանցից առաջնայինը կլիմայական գործոններն են, որոնք բազմաթիվ են և պահանջում են մանրակրկիտ հետազոտություն, որը թույլ կտա դրանք օգտագործել համակարգային ձևով և օբյեկտիվորեն գնահատել տարածքի կոմֆորտայնությունը:

Խնդրի դրվածք: Աշխատանքում խնդիր է դրվել հաշվարկել և գնահատել Սյունիքի տարածաշրջանի եղանակի փոփոխության ինդեքսը, որը հնարավորություն կտա բնական միջավայրի կոմֆորտայնության, օդերևութաբանական պայմաններից կախում ունեցող հիվանդների տեղաբաշխման և ռեկրեացիոն գոտիների առանձնացման համար:

Հետազոտության մեթոդիկան: Այս աշխատանքում հետազոտված է կլիմայական կարևոր ցուցանիշներից մեկը՝ եղանակային պայմանների փոփոխության ինդեքսը: Այն որոշելու համար վերլուծվել են ցուցանիշը բնութագրող բազմամյա տվյալներ: Դրանք մշակվել են, հաշվարկվել և գնահատվել:

Եղանակի փոփոխության ինդեքսը հաշվարկելու համար մենք օգտագործել ենք Ռուսանովի (1973 թ.) առաջարկած բանաձևը, որը ունի հետևյալ տեսքը՝

$$Ki = Mk/N,$$

որտեղ Mk -ն կոնստրակտային ժամանակահատվածի թիվն է, N -ը՝ տարվա կամ ամսվա դիտարկված օրերի թիվը: Յուրաքանչյուր ժամանակահատվածի թվի հիմքում ընկած է 5^0 -ից բարձր ջերմաստիճանի օրական հաջորդումների և պարզկա եղանակից խիստ ամպամած եղանակի անցման օրերի թիվը [2]: Եթե ջերմաստիճանի դեպքում այն պարզ տեսք ունի, ապա եղանակի պարզ օրերից ամպամած անդամների թիվը մեծ դժվարությունների առաջ կանգնեցրեց մեզ, քանի որ տվյալներում նշված է նաև ոչ ամպամած և ոչ պարզկա միջանկյալ եղանակի թիվը: Այս դեպքում մենք ամպամած /8-10 բալ/ եղանակի թվից հանել ենք /0-2 բալ/ եղանակի թիվը: Հաշվարկի արդյունքում ստացված տվյալները արտահայտված են աղյուսակով: Այսպես, եթե ստացել ենք 50, նշանակում է տեղի է ունեցել եղանակային պայմանների օրումեջ փոփոխություն: Ուսումնասիրությունները կատարել ենք ըստ լանդշաֆտային գոտիների:

Աղյուսակ 1:

Մյունիքի մարզի տարբեր լանդշաֆտային գոտիներում եղանակի փոփոխության ինդեքսներ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
Կիսաանապատային	33.2	33	67	60	77	46	40	45	50	45	40	29	47
Չոր տափաստանային	35	40	65	55	64	32	42	41	58	58	59	45	49
Լեռնասևահողային տափաստաններ	40	43	66	68	72	48	47	31.4	55	43	43	34	49
Լեռնանտառային	35	41	52	51	51	42	44	44	42	38	38	35	42
Լեռնամարգագետնային	41	48	63	64	57	27	30	29	41	44	42	40	43
Զյունամերձ	30	35	37	46	55	55	50	49	50	45	38	31	43
	35.6	40	58	57.3	62.6	42	43.6	39.8	39.8	48.5	45.5	43.3	35.6

Արդյունքները և դրանց վերլուծությունը: Նախ նշենք, որ հետազոտությունը կատարվել է ըստ քննարկվող տարածքի լանդշաֆտային գոտիների ամսիների և տարվա կտրվածքով: Սա նախ քայլ է այլ տվյալների հետ մեկտեղ գնահատելու տարածքի կոմֆորտայնությունը, և առավել կարևոր է օդերևութաբանական պայմաններից կախում ունեցող հիվանդությունների համար նպաստավոր գոտիների առանձնացման գործում: Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ տարեկան կտրվածքով առավել նպաստավոր է լեռնասևահողային լանդշաֆտային գոտին: Այստեղ եղանակի փոփոխության ինդեքսը ամենափոքրն է: Պետք է նշել, որ եթե տարեկան տվյալները համեմատում ենք մեր նախկին աշխատանքի, տարածքի դիսկոմֆորտայնության գործակցի հետ, ապա դրանք համընկնում են [1]: Սա ցույց է տալիս, որ ընտրված մեթոդը և ստացված արդյունքները հավասարազոր են և ճիշտ: Ինչ վերաբերում է ամսական տվյալներին, ապա նկատվում է, որ (տես աղյուսակ 1) նշանակալի փոփոխության ինդեքսը փոքր է ձմռան և ամռան ամիսներին: Մակայն այս ցուցանիշը տարբեր լանդշաֆտային գոտիներում տարբեր է: Այսպես, եթե կիսաանապատային գոտում եղանակի կտրուկ փոփոխությունները սկսվում են 3-րդ ամսից և տևում մինչև 5-րդ ամիս, ապա լեռնամարգագետնային գոտում այն սկսվում է 4-րդ ամսից մինչև 6-րդ ամիս՝ կախված վերընթաց գոտիականությունից: Այնուհանդերձ բոլոր լանդշաֆտային գոտիներում բարձր արժեքի ինդեքս նկատվում է գարնանը և աշնանը, որը կապված է ՀՀ ամբողջ տարածքում մթնոլորտային ճակատի առաջացման հետ: Ընդ որում՝ պետք է նշենք, որ ինդեքսը ամենաբարձր արժեքը ստանում է գարնանը, քան աշնանը՝

պայմանավորված ճակատի ինտենսիվությունից, որը առավել աչքի է ընկնում գարնանը: Հիմք ընդունելով վերլուծությունը՝ կարող ենք առաջարկել օդերևութաբանական պայմաններից կախում ունեցող հիվանդներին ուղարկել ժամանակավոր միգրացիայի, պիկերի ժամանակահատվածում տեղափոխել այլ լանդշաֆտային գոտիներ, օրինակ՝ չոր տափաստաններում բնակվող հիվանդներին՝ լեռնատափաստանային կամ կիսաանապատային գոտի՝ դրանով նպաստելով նրանց առողջությանը: Վերլուծության արդյունքում կարող ենք նշել, որ ռեկրեացիոն գոտիներ առավել հարմար է ձևավորել լեռնաանտառային և լեռնամարգագետնային գոտիներում:

Եզրակացություն: Այսպիսով, վերլուծելով Սյունիքի մարզի եղանակային փոփոխության ինդեքսի տվյալները՝ կարող ենք անել հետևյալ եզրակացությունները.

1. Օդերևութաբանական պայմաններից կախում ունեցող հիվանդների համար նպաստավոր տարածքներ կարող են համարվել լեռնաանտառային և լեռնամարգագետնային գոտիները: Սրանք միաժամանակ նպաստավոր տարածքներ են ռեկրեացիոն գոտիներ ձևավորելու համար:
2. Եղանակի փոփոխության բարձր արժեքներ դիտվում են հիմնականում գարնանը և աշնանը, որոնք համընկնում են ՀՀ տարածքում մթնոլորտային ճակատների ձևավորման հետ:
3. Եղանակի փոփոխության ինդեքսը կլիմայական այլ ցուցանիշների հետ մեկտեղ կարելի է օգտագործել տարածքի կոմֆորտայնության որոշման համար:
4. Անհրաժեշտ է հիվանդ բնակչության շրջանում կազմակերպել սեզոնային միգրացիա մշտական բնակության վայրից ապահովելով նրանց ադապտացիայի տևողությունը:

АНАЛИЗ И ОЦЕНКА ИНДЕКСА ПЕРЕМЕНЧИВОСТИ ПОГОДЫ С ЦЕЛЬЮ ОПРЕДЕЛЕНИЯ КЛИМАТИЧЕСКОЙ КОМФОРТНОСТИ СЮНИКСКОГО МАРЗА

Давтян П. Г., Давтян Т. П., Варданян А. А.

В статье проведен расчет, анализ и оценка индекса изменчивости погоды на основе многолетних данных, описывающих погодные условия. Последнее дает возможность определить комфортность территории с целью выбора благоприятных территорий для метеочувствительных больных и разделить рекреационные зоны.

Ключевые слова: комфортность, индекс изменчивости погоды, метеорологическое заболевание, рекреация.

ANALYSIS AND EVALUATION OF WEATHER VARIABILITY INDEX WITH THE AIM TO DEFINE A CLIMATE COMFORT OF SYUNIK MARZ

Davtyan P. G., Davtyan T. P., Vardanyan A. H.

Weather variability index is estimated, analyzed and evaluated in the statement, based on a long-term data describing weather conditions. The latter makes it possible to define climate comfort of territory with the aim to select favorable territories for meteosenstive patients and to separate recreational areas.

Keywords: comfort, weather variability index, meteorological disease, recreation.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դավթյան Պ. Գ., Դավթյան Տ. Պ., Վարդանյան Ռ. Ռ., Վարդանյան Ա. Հ. ՀՀ լանդշաֆտային գոտիների միգրացիան կլիմայի գլոբալ փոփոխության համատեքստում// ԵՊՀ գիտական տեղեկագիր: 2021: Հատոր 55, N 1(254): Էջ 108-115:
2. Архипова И. В. Оценка климатических условий для жизнедеятельности населения. // Современные проблемы социальной географии: сб. статей / ИГ СО РАН. Иркутск. 2005. С. 76–78.
3. Дьякова И. В. Медико-экологические исследования в Алтайском крае.//География и природопользование в современном мире: сб. статей / АГУ. Барнаул. 2001. С. 151–153.

Տեղեկություններ հեղինակների մասին

Դավթյան Պ. Գ. – աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Երևանի պետական համալսարան

Էլ. փոստ՝ petrosdavtyan@mail.ru

Դավթյան Տ. Պ. – տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Երևանի պետական համալսարան

Էլ. փոստ՝ tigrandavtian@gmail.com

Վարդանյան Ա. Հ. – դասախոս

Երևանի պետական համալսարան

Էլ. փոստ՝ arm.vard.1993@mail.ru

Տրվել է խմբագրություն՝ 25.08.2021

Գրախոսվել է՝ 17.11.2021